



«Յետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն

Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219
Email:armenmirzoian@gmail.com, info@hetq.am, URL : www.hetq.am

15.09.2021թ

ՀՀ Արտաքին գործերի նախարար
Արարատ Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. 2018 թվականի հուլիսի 8-ին Սլովակիայում Հայաստանի այն ժամանակ դեսպան Տիգրան Սեյրանյանը [քննադատության էր ենթարկել](#) այդ երկրին Ադրբեջանին՝ Սլովակիայի կողմից [Dana հիմնադրամի հաւուրիցի և RM-70 ՀԿՌՀ-ների վաճառքի մասով](#): 2021 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և Սլովակիայի ԱԳ նախարար Իվան Կորչոկի հանդիպման վերաբերյալ մամլո հաղորդագրության մեջ չի նշվում այդ երկրի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքի քննարկման և մեր մտահոգությունների փոխանցման մասին: Արդյո՞ք այդ հարցը քննարկվել է սեպտեմբերի 14-ին երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հանդիպման ժամանակ:
2. Եթե այո՞, ապա ի՞նչ ուղերձներ են այդ մասով փոխանցվել սլովակական կողմին:
3. Ի՞նչ արձագանք է տվել սլովակական կողմը:
4. Մամուլի համար համատեղ հայտարարության ժամանակ նախարար Միրզոյանը նշել է կորոնավիրուսի համավարակի ժամանակ Սլովակիայի Հայաստանին ցուցաբերած օգնության մասին: Ի՞նչ օգնության մասին է խոսքը:


«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում եմ ք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

«Ջետաքննող լրագրողներ» ՋԿ

«Ջետք» թերթի լրագրող

Արմեն Միրզոյան

A handwritten signature in blue ink, appearing to be 'Armen Mirzoyan', is written on a light blue grid background. The signature is fluid and cursive, with a large initial 'A' and a long horizontal stroke at the end.